ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱԳՐԱՐԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է.Գ.ՄԻՆԱՍՅԱՆ

1991թ. Հայաստանի Հանրապետության անկախությունը իր հետ բերեց նոր ու ավելի բարդ սոցիալ-տնտեսական խնդիրներ: Հայաստանը, բացառյալ մի շարք երկրների կողմից ստացվող ոչ մեծ օգնությունը, մնաց միայնակ իր ծանրագույն հոգսերի հետ: Եթե սրան ավելացնենք Հանրապետության լիակատար շրջափակումը, ինչպես նաև պատերազմը Լեռնային Ղարաբաղում և Հայաստան բռնագաղթված փախստականների օրհասական դրությունն ու էներգետիկ ճգնաժամը, ապա Հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակի պատկերը կամբողջանա:

ԽՍՀՄ-ի փլուզման և շրջափակման հետևանքով խզվեցին միջհանրապետական տնտեսական ավանդական կապերը, դադարեց հումքի մատակարարումը: Մեծ տերության մի մասը կազմող և նրա հարստություններից ու առավելություններից լիուլի օգտվող Հանրապետությունից Հայաստանը դարձավ սեփական վառելիքաէներգետիկ պաշարներից զուրկ, հանքահումքային սուղ պաշարներ ու ոչ մեծ տարածք ունեցող անկախ պետություն, որն արդեն ինքնուրույն պետք է լուծեր պետության կայացման խնդիրը և իր առջև ծառացած սոցիալ-տնտեսական հիմնահարցերը:

Նման իրավիճակում Հանրապետության ղեկավարության առջև ծառացած հիմնական հարցը մնում էր շրջափակման վերացման միջոցով տնտեսական դրության բարելավումը: Այս ծանր պայմաններից դուրս գալու նպատակով, Հանրապետությունում մի շարք բարեփոխումներ կենսագործվեցին: Հայաստանի անկախության հռչակագրի դրույթներից ելնելով՝ ծրագրվում էր տնտեսությունն արմատապես վերափոխել: Հիմնականում նախատեսվում էր հասարակական-քաղաքական ու տնտեսական նոր պահանջներին համապատասխան՝ անցում կատարել ղեկի շուկայական հարաբերություններ:

Հաշվի առնելով տևական շրջափակման և տնտեսական փլուզման մեջ գտնվող Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա ագրարային ոլորտի ունեցած վճռորոշ ազդեցությունը և ելնելով բնակչության պարենային ապահովվածության հույժ կարևոր խնդրից՝ գյուղատնտեսությունը դիտվեց տնտեսության առավել կարևորագույն բնագավառներից մեկը, և 1991թ. հենց այս ոլորտից էլ սկսվեց սեփականաշնորհումը՝ նպատակ ունենալով այն դարձնել շուկայական հարաբերությունները կարգավորող կայուն ու արդյունավետ բնագավառ:

Հայաստանը նախկին ԽՍՀՄ Հանրապետություններից առաջինն էր, որ 1991թ. կարճ ժամանակամիջոցում սեփականաշնորհեց հողը: Հողը մշակողին վերադարձնելու և նրա մասնավոր սեփականատիրությունը իրախուսելու նպատակով Հանրապետության խորհրդարանը 1991թ. հունվարին

ընդունեց «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրքը»[1] և «Գյուղացիական և գյուղական կոլեկտիվ տնտեսությունների մասին» օրենքը[2]: Այստեղ մանրամասն նշվում էր հողային օրենսդրության ընդունման կարևորությունը մասնավոր հողատիրության զարգացման համար, սահմանվում էին գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների գործունեության տնտեսական, կազմակերպչական, սոցիալական պայմաններն ու իրավական հիմքերը: Այդ օրենքով 1991 - 1992թթ. լուծարվեցին հանրապետությունում եղած 900 կոլտնտեսություններն ու պետական տնտեսությունները, որոնք թողարկում էին գյուղատնտեսական արտադրանքի ավելի քան 90%-ը: Դրանց փոխարեն ձևավորվեցին 320 հազարից ավելի անհատական տնտեսություններ[3]: Իբրև անհատական սեփականություն, դրանց փոխանցվեց հողերի 66 %-ը, իսկ անասունների՝ 80%-ը, մնացած հիմնական միջոցները՝ գրեթե ամբողջությամբ[4]: Հողերի սեփականաշնորհման քաղաքականությունն ամրապնդվեց ՀՀ կառավարության մի շարք որոշումներով և 2001թ. մայիսի 2-ին ընդունված Հայաստանի Հանրապետության նոր հողային օրենսգրքով[5]:

---

[1] Տե՛ս Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990 - 1995թթ.), Ե. 1995, էջ 80 - 106:

[2] Նույն տեղում, էջ 67 - 80:

[3] Էկոնոմիկա, 1 - 3, Ե., 1996, էջ 29, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1990 թվական, Ե., 1991, էջ 185, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993 - 1994թթ., Ե., 1995, էջ 129, Հայաստանը թվերով, 1992, Վիճակագրական համառոտ ժողովածու, Ե., 1994, էջ 90:

[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1991թ., Ե., 1994, էջ 148, 152:

[5] ՀՀ կառավարությունը 1991թ. հունվարի 22-ին (43) որոշում ընդունեց «ՀՀ Նախարարների խորհրդի հողային ռեֆորմի և սեփականաշնորհման կենտրոնական պետական հանձնաժողովի և նրա աշխատանքային ապարատի ստեղծման մասին», փետրվարի 8-ին (86)՝ «ՀՀ շրջանների գյուղատնտեսական ձեռնարկությունների սեփականության տրվող հողատեսքերի մասնակի հատուցման չափերի մասին», մարտի 5-ի (63) որոշմամբ սահմանվեց գյուղացիական տնտեսությունների վարկավորման և ֆինանսավորման կարգը, մարտի 6-ին (77) որոշում ընդունվեց «Գյուղացիական տնտեսություն վարելու համար որպես սեփականություն տրամադրվող հողաբաժնի առանձին կտորների առավելագույն քանակ սահմանելու մասին», «Խաղողի և պտղատու այգիների սեփականաշնորհման որոշ հարցերի մասին», մարտի 11-ին (92)՝ «Սեփականաշնորհվող գյուղատնտեսական ձեռնարկությունների գույքի և հիմնական արտադրական միջոցների ձեռքբերման արտոնությունների մասին», ապրիլի 16-ին (283)՝ «Հողի սեփականաշնորհման ընթացքում ստեղծված պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների և կոլեկտիվ տնտեսությունների կարգավիճակի մասին», մայիսի 9-ին (333)՝ սեփականաշնորհվող անասնագլխաքանակի մասին», հունիսի 20-ին (417)՝ «Սեփականաշնորհված անասնագլխաքանակի համար բնամթերային հարկի վճարման մասին», հունիսի 19-ին (412)՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին սեփականաշնորհված հողամասերի արժեքի հատուցման կարգի մասին», նոյեմբերի 5-ին (631)՝ ՀՀ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների աշխատողների սոցիալական պաշտպանվածության մասին», իսկ 1992թ. ապրիլի 14-ին (231)՝ «Սեփականաշնորհվող անասնագլխաքանակի, գյուղտեխնիկայի և մյուս հիմնական միջոցների վաճառքի գների և ինդեքսավորման կարգի մասին», հուլիսի 1-ին (385)՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններից կանխիկ գումարով հացահատիկ գնելու մասին», սեպտեմբերի 16-ին (479)՝ «Գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտսություններին սեփականաշնորհված հողի և մյուս հիմնական միջոցների դիմաց մուծումների մասին» (Հայաստանի Հանրապետության կառավարության ընթացիկ արխիվ՝ ՀՀ կառավարության որոշումները 1991թ. գ.1, հոդվ. 6, թ. 38 - 48. գ.2, հ.11, թ. 120, գ.3, հ.19, թ. 223 - 226, հ.

Հողի սեփականատեր դարձան հիմնականում բոլոր գյուղաբնակները և այլ վայրերում ապրող նախկին գյուղացիները, որոնք նման ցանկություն էին հայտնել: Հողի սեփականաշնորհման մասին օրենքը, որն ընդունվեց տնտեսական ճգնաժամի ծանր պայմաններում, գյուղական բնակչությանն ապահովեց աշխատանքով և որոշ չափով նպաստեց նրա գոյության պահպանմանը, մեղմեց սովի վտանգը: Ագրարային ոլորտի արմատական բարեփոխումները բարերար ազդեցություն ունեցան գյուղացիության աշխատանքային գործունեության ծավալման և աշխատողների կազմի երիտասարդացման վրա: Նկատելիորեն մեծացան գյուղացիների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունն արտադրության ընդլայնման և արդյունավետության բարձրացման գործում: Նոր հիմունքներով կազմակերպվեցին արտադրությունն ու գյուղական կյանքը: Նորաստեղծ գյուղացիական տնտեսությունները փոփոխությունների ենթարկեցին ցանքերի կառուցվածքը: Սկսեցին տվյալ պայմաններին համապատասխան բույսեր մշակել և անասուններ պահել: Նրանք այլևս հարկադրված չէին կատարելու պլանային առաջադրանքներ: Հողի սեփականաշնորհման մասին օրենքի կենսագործմամբ զգալիորեն ավելացավ գյուղական բնակչությունը: Հողով բավարարվեց փախստականների մի մասը, վերակենդանացան նախկինում լքված շատ գյուղեր: Այդ ամենի շնորհիվ գյուղատնտեսական արտադրությունը սկզբնական շրջանում այնպիսի ճգնաժամ չապրեց, ինչպես արդյունաբերությունը կամ շինարարությունը, թեև 1993թ. գյուղատնտեսության զուտ արդյունքի ծավալը 1989թ. նկատմամբ նվազեց 18 %-ով[5]: Այնուամենայնիվ, 1990-ական թվականներին գյուղատնտեսության տեսակարար կշիռը համախառն ներքին արդյունքում (ՀՆԱ) ձեռք բերեց անհամամասնական աճի միտում: Այն 1990թ. կազմել է 17,2 %, 1994թ.՝ 43,3 %, 1999թ.՝ 25,3 %: 1999թ. գյուղատնտեսության տեսակարար կշիռը ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում ամենաբարձրն է եղել և 3,8 %-ով գերազանցել է արդյունաբերության տեսակարար կշիռը[6]: Այս փոփոխությունները կարող էին գյուղատնտեսության և գյուղի սոցիալ-տնտեսական առաջընթացի արագացման կարևոր կռվան դառնալ, եթե ամրապնդվեին անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով, կարգավորված արտադրական հարաբերություններով, պետական հովանավորմամբ: Սակայն դրանց կարևորությունը չըմբռնվեց ու թերագնահատվեց, որի հետևանքով գյուղատնտեսությունը մեծ նահանջ ապրեց:

Գյուղում ստեղծված արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների մանրատման և փոշիացման հետևանքով սակավահող Հայաս-

---

23 - 24, թ. 241 - 243, հ. 27 - 28, թ. 257 - 258, գ.4, հ. 40, թ. 449 - 450, գ. 5, հ. 46, թ. 495, հ. 47, թ. 499, հ. 51, թ. 521 - 522, գ.6, հ. 53 - 54, թ. 573 - 574, հ. 58 - 59, թ. 580 - 583, գ. 11, հ. 98, թ. 918 - 920. հ. 101 - 102, թ. 926 - 929, 1992թվական, գ. 1, հ. 1, թ. 3 - 5, գ. 4, հ. 27 - 28, թ. 6 - 7, գ. 7, հ. 43 - 44, թ. 19 - 20, գ. 9, հ. 63 - 64, թ. 38 - 39, գ. 11, հ. 76 - 77, թ. 18): Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք, Եր., 2001:

[5] ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, զեկուցագիր թիվ 1, Ե., 1994, էջ 25, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Ե., 1991, էջ 145, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 1993 - 1994, էջ 131:

[6] ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն. Հայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրերը (ըստ 1991 - 1999թթ. սոցիալ-տնտեսական միտումների), Ե., 2000, էջ 4:

տանում ցանքատարածությունները կրճատվեցին մոտ 100 հազար հեկտարով (ավելի քան 20 %-ով), բազմամյա տնկարկների տարածությունը՝ ավելի քան 30 հազար հեկտարով (35,9%), խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը՝ 191,1 հազարով (27,7 %), ոչխարներինը և այծերինը՝ 437 (33,8 %), խոզերինը՝ 245, թռչուններինը՝ 8261,1 հազարով (3,8 անգամ)[8]: Մեծ չափերով նվազեցին դաշտերի բերքատվությունը և անասունների մթերատվությունը, գյուղատնտեսության համախառն արտադրանքն ու հատկապես պետական մթերումների ծավալը: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թվաքանակը կրկնապատկվելու պայմաններում համախառն արտադրանքի ծավալը դեռևս շատ հետ է նախորդ տարիների միջին ցուցանիշից:

Տնտեսական վերափոխումների սկզբնական փուլում թվում էր, թե գյուղատնտեսությունը հեշտությամբ կհարմարվի շուկայական հարաբերություններին, բայց փաստորեն այդպես չեղավ՝ թույլ տրված մի շարք կոպիտ սխալների պատճառով:

Առաջին. Մասնավոր սեփականատիրական հողօգտագործմանն անցնելը բարդ և տևական գործընթաց է, որը չի կարելի լուծել մեկ հարվածով: Այն կատարվեց առանց հողի անհատական մշակման պայմանների, գյուղատնտեսական տեխնիկայի ու նրա օգտագործման հնարավորությունների և այլ խնդիրների խոր քննության: Պատահական չէ, որ նոր դժվարություններ ծագեցին ու կորուստներ տեղի ունեցան: Հանրապետությունում, հատկապես 1996 – 1999թթ., արձանագրվեց գյուղատնտեսական արտադրանքի, մասնավորապես հացահատիկի, կարտոֆիլի և պտղի արտադրության ծավալների զգալի նվազում: Այսպես, օրինակ, հացահատիկային մշակաբույսերի կորուստները 1999թ. 1 հեկտարից միջին հաշվով եղել են 116 կգ՝ 1998թ. 113 կգ-ի դիմաց, որը կազմել է 1 հա միջին բերքատվության 5,9 %-ը[9]: Հացահատիկային կորուստները հանրապետության միջին մակարդակից բարձր էին՝ Արարատի մարզի տնտեսություններում՝ 238կգ (միջին բերքատվությունը՝ 7,5 %), Վայոց Ձորի մարզում՝ 153 կգ (12,3%), Կոտայքի մարզում՝ 136կգ (9,6 %)[10]:

Հանրապետությունում 1999թ. հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի 61,8 %-ը արտադրվել է Շիրակի, Արմավիրի և Արարատի մարզերում կարտոֆիլի մոտ 64,5 %-ը՝ Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի բանջարեղենի և խաղողի համապատասխանաբար՝ 66,8 և 82,7 %-ը՝ Արմավիրի ու Արարատի, պտղի և հատապտուղների 75,1 %-ը՝ Արագածոտնի, Արմավիրի, Արարատի և Կոտայքի մարզերում, բոստանային մշակաբույսերի համախառն բերքի 85,8 %-ը՝ Արմավիրի մարզում: Մտահոգության տեղիք է տալիս Արմավիրի և Արարատի մարզերի հայտնվելը հացահատիկ արտադրող մարզերի շարքում: Նշված մարզերում 1990թ. համեմատությամբ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները 2000թ. ավելացել են շուրջ 4 անգամ, մինչդեռ խաղողի և պտղատու այգիների

---

[8] Հ. Ֆահրադյան, Հայաստանի Հանրապետությունում ագրարային արմատական բարեփոխումների արդյունքների և մի քանի խնդիրների մասին (Էկոնոմիկա, 1996, № 1 - 3, էջ 29):

[9] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, Ե., 2000, էջ 26:

[10] Նույն տեղում:

տնկարկների տարածությունները կրճատվել են շուրջ 2 անգամ[11]: Մտահոգիչ է նաև այն, որ 2000թ. տևական երաշտի հետևանքով, բերքահավաքի ժամանակ հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի կորուստը Հանրապետությունում կազմել է մոտ 124 հազար տոննա[12]:

Ագրարային արմատական վերակառուցումների գործընթացը Հանրապետությունում սկսվել է ոչ թե գյուղացիների պահանջով, այլ իշխանության բարձրագույն մարմինների որոշումներով: Ուստի, վերջիններս ժամանակ ունեին ինչպես հարկն է նախապատրաստվելու վերափոխումների գործընթացին, անհրաժեշտ պայմաններ ստեղծելու և մեխանիզմներ մշակելու, որոնք պետք է ուղղված լինեին գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը: Գործնականում, սակայն, ագրարային վերափոխումները Հայաստանում սկսվեցին գարնանային աշխատանքներին զուգահեռ, ինչը թույլ չտվեց կոլեկտիվ և պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների ունեցվածքն ինչպես հարկն է գույքագրել և վերագնահատել: Կոլտնտեսությունների և սովխոզների համատարած լուծարումն իրականացվեց հապշտապ, շատ սեղմ ժամանակահատվածում, անկազմակերպ ու վարչահրամայական եղանակով: Բացի այդ, գյուղատնտեսական բոլոր գոտիներում տնտեսությունների լուծարումը և հողի սեփականաշնորհումն իրականացվեցին առանց որևէ տարբերակման և տարբեր գոտիների առանձնահատկությունների հաշվառման:

Հարթավայրային գոտում սեփականաշնորհված հողատարածքներն անհամեմատ փոքր էին նախալեռնային գոտու հողակտորներից: 1997թ. ՀՀ պետվիճվարչության կողմից ուսումնասիրված 3400 գյուղացիական տնտեսությունների 48 %-ը ունեին մինչև 1 հա հող, իսկ 28 %-ը՝ 1 - 2 հա[13]: Այսպիսով, գյուղացիական տնտեսությունների 3/4-ից ավելին ունեին 2 հա-ից պակաս հող, որը տրոհված էր 2 - 3 տարբեր հողակտորների: Դրանք գաճաճ և դժվար մշակելի հողեր էին: Անշուշտ, հողերի արդյունավետության տարբերությունը մեծ էր: Օրինակ, առաջին խմբի հողերի 0,5 հա-ից ստացված արտադրանքի ծավալը 20 անգամ գերազանցում էր երկրորդ խմբի հողերի արտադրանքի ծավալին[14]:

Որոշ ղեկավարների՝ «առաջինը» լինելու անմիտ ձգտումների, տեղական մարմինների դանդաղկոտության, անպատասխանատվության, ամենաթողության, ինչպես նաև օրենքների կիրարկման նկատմամբ անհրաժեշտ վերահսկողության բացակայության հետևանքով սակավահող Հայաստանում սեփականաշնորհելուց հետո տասնյակ հազարավոր հա վարելահողեր, որոնք ամրացվել էին տեղական խորհուրդներին, մնացին անօգտագործելի:

Երկրորդ. Սեփականաշնորհման ընթացքում թույլ տրված անարդարությունների և գործընթացի անհամաչափության հետևանքով, ինչպես նաև սեփականաշնորհված հողերի անհավասար պտղարերության պատճառով գյուղական բնակչության մի մասը, հատկապես բարձրլեռնային

---

[11] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-մարտին, Ե., 2000, էջ 21:

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-նոյեմբերին, Ե., 2001, էջ 18:

[13] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997թ. հունվար-մարտին, Ե., 1997, էջ 15, 16, 63, 64, ՀՀ պետվիճվարչության գյուղացիական տնտեսությունների հետազոտություն, Ե., 1997, մարտ, էջ 8:

[14] Նույն տեղում:

շրջաններից և ջրազուրկ ու չոր վայրերից, ստիպված եղավ գաղթել քաղաքներ՝ աշխատանք փնտրելու՝ համալրելով գործազուրկների բանակը: Սեփականաշնորհման գործընթացում համաժողովրդական և կոլտնտեսային ունեցվածքը չնչին դներով հաճախ անցնում էր այն մարդկանց ձեռքը, որոնք կամ քիչ կամ էլ ընդհանրապես չէին մասնակցել դրանց ստեղծմանը: Դա ըստ էության «նոմենկլատուրային» սեփականաշնորհում էր, որի վտանգավորությունը բազմակացութաձևությունը մենաշնորհով փոխարինելու մեջ էր: Սեփականաշնորհումը շատ դեպքերում ծառայեցվում էր առանձին մարդկանց հարստացմանը, որն ամենևին էլ ձեռներեցության խթանում չէր: Պետական սեփականության առանձին միավորները հայտնվեցին բանկերից նախկինում վարկեր ստացած «ցեխավիկների» կամ տվյալ շրջանի իշխանությունների «շրջապատի» ձեռքին: Սեփականաշնորհման այս փուլում արտադրության միջոցները, փաստորեն, սեփականաշնորհվեցին առանձին մարդկանց՝ էժան գնով (օրինակ, Վարդենիսի պանրի գործարանը իր շենքերով, արտադրական հոսքերով սեփականաշնորհվեց ընդամենը 400 ԱՄՆ դոլարով): Այդպիսի փաստերը շատ են[15]: Ստեղծված իրադրության մեջ հնարավոր դարձավ նաև հանրային ունեցվածքի մի մասի յուրացումը ֆերմաներում, պահեստներում և այլն: Հաճախ սեփականաշնորհումը գլխավորում էին գյուղխորհուրդների և կոլխոզ-սովխոզների նախագահները, որոնց ընտանեկան կլանները դարձան անասունների, անասնագոմերի տերեր: Սեփականաշնորհման գործընթացն ուղեկցվում էր հարկային ծանր բեռի վերաբերյալ մշուշոտ, երբեմն կեղծ լուրերով, որոնք տագնապ էին առաջացնում բնակչության մեջ: Նրանք զանգվածաբար հրաժարվում էին իրենց հասանելիք անասուններից: Որոշ դեպքերում գյուղերում տնտեսությունների անասունները մինչև սեփականաշնորհումը կենտրոնացվել էին նույն ղեկավարության կողմից գլխավորվող կոոպերատիվների ձեռքին, որոնք օգտվեցին սեփականաշնորհման առաջնահերթության իրավունքից: Դրան նպաստեց նաև լուծարվող կոլտնտեսությունների ու սովխոզների անասունները գյուղացիական տնտեսություններին բաշխելիս դրանց նվազագույն չափի վերաբերյալ կառավարության որոշումը, որով ամենևին հաշվի չէին առնվում գյուղացիության ֆինանսական, շենքային, կերարտադրության և այլ հնարավորությունները[16]: Փոքր հողակտոր ստացած, արոտավայրերից փաստորեն զուրկ՝ Արարատյան հարթավայրի գյուղացին չէր կարող բավարար թվով անասուններ ձեռք բերել ու դրանով բարելավել իր տնտեսական վիճակը, քանի որ կոշտ ու հյութալի կերերի արտադրության և խտացված կերերի ձեռքբերման հնարավորությունները խիստ սահմանափակ էին[17]: Տնտեսությունների մի մասի հանրային հոտերում մնացած անասունները բավարար չէին խնամվում, իսկ տոհմային բարձր մթերատուները «փոխարինվում» էին ցածրարժեք անասուններով: Անասունների, շենքերի և գյուղմեքենաների սեփականաշնորհումները շատ տեղերում իրականացվեցին օրենքի լուրջ խախտումներով, սոցիալական արդարության անտեսումով ու պաշտոնական դիրքի չարաշահումներով, որոնք «օրինականացվեցին» համապատասխան ակտերով: Նախկին

---

[15] Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, Ե., 2000, էջ 12:

[16] ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1991, թ. 23, հ. 19, 24 - 25, թ. 223 - 242, հ. 27 - 28, թ. 257, գ. 4, հ. 35 - 36, թ. 438 - 439:

[17] Նույն տեղում:

կոլտնտեսությունների և սովխոզների ունեցվածքը նույն գնով վաճառվեց թե կոլտնտեսականներին և թե նրանց, ովքեր շատ քիչ կամ բոլորովին չէին մասնակցել դրանց ստեղծմանը: Ստացված գումարի մի մասը վերցրեց կառավարությունը՝ հետագայում այն իբր գյուղատնտեսության զարգացման նպատակով օգտագործելու համար: Այսինքն՝ «փայը» չվերադարձվեց «փայատիրոջը»: Բացահայտորեն ոտնահարվեց սոցիալական արդարությունը: Դրա հետևանքով ունեցվածքի մեծ մասը յուրացվեց պատահական մարդկանց կողմից, որոնք ոչ մի կապ չունեին կոլտնտեսության հետ:

Երրորդ. Կոլտնտեսությունների և սովխոզների լուծարման հետևանքով առանց այն էլ փոքր մակերեսով մշակվող հողակտորները է՛լ ավելի մանրատվեցին: Յուրաքանչյուր տնտեսությանը միջին հաշվով հատկացվեց համապատասխանաբար 1,3 և 1,5 հա հող[18]: Առավել բնակեցված և պտղաբեր շրջաններում տնտեսության միջին հողատարածքը մինչև 0,75 հա էր, իսկ երկրի հյուսիս-արևելքում 2,5 հա-ից մի քիչ ավելի[19]: Հետագայում շրջանների մեծ մասում նկատվեց գյուղացիական տնտեսությունների թվի և չափերի նվազում: Համեմատության նպատակով նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունում 1991թ. ստեղծվեց 270 հազար գյուղացիական տնտեսություն, որոնց միջին հաշվով հատկացվեց 42 հա վարելահող[20]: Հայաստանի Հանրապետությունում կոլեկտիվի անդամները նախընտրում էին ընտանեկան տնտեսվարման ձևը: Առաջին տարում արդեն, ցանված հողատարածք ստանալով, գյուղացիությունը ոգևորվեց, բայց հետագայում հանդիպելով մեծ դժվարությունների, հրաժարվեց մշակել հողային շատ տարածքներ: Հայաստանի սակավահողության պայմաններում, սկսած 1991թ., յուրաքանչյուր տարի միջին հաշվով չի մշակվում մոտ 90 հազար հա վարելահող կամ ամբողջի 18,5 %-ը[21]: Դրան խանգարում է նաև գյուղացիական տնտեսություններին հատկացված հողակտորների հեռավորությունը՝ ինչպես միմյանցից, այնպես էլ բնակավայրից, որը հաճախ հասնում է 15 - 20 կիլոմետրի[22]:

Այդ պայմաններում մեծապես ընկավ աշխատանքային, հողային, ջրային և նյութական մյուս միջոցների օգտագործման, ինչպես նաև գյուղատնտեսական վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետությունը: Բացի այդ, նվազեցին հողերի բերրիության վերականգնման ու բազմապատկման, բերքի փոխադրման, պահպանման և իրացման հնարավորությունները: Տնտեսությունների մասնատման պատճառով խավանվեց գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումները գյուղատնտեսության մեջ արմատավորելու գործընթացը: Գյուղատնտեսական արտադրության մանրատումը և մասնագիտական ծառայությունների կազմալուծումը հանգեցրին արտադրության տեխնոլոգիաների լուրջ խախտումների, բույսերի և կենդանիների հիվանդությունների ու վնասատուների դեմ պայքարի բարձիթողի վիճակի, որը հղի է համաճարակային

---

[18] Հայաստանը թվերով 1992թ., Վիճակագրական համառոտ ժողովածու, էջ 91:

[19] Տե՛ս նույն տեղում:

[20] Российский статистический ежегодник, Статистический сборник, М., 1994, с. 341, 346 – 347.

[21] ՀՀ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, գ. 20 - 15 - 99, թ. 2, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1998թ. հունվար-դեկտեմբերին, Ե., 1999, էջ 21:

[22] Հայաստանի Հանրապետություն, 11. VI. 1992:

հետևանքներով: Հանքային պարարտանյութերի նկատմամբ գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների պահանջարկը բավարարելու նպատակով ՀՀ-ի և Ճապոնիայի կառավարությունների միջև ստորագրված համաձայնագրերի հիման վրա 1998թ. ներմուծվեց ավելի քան 15 հազ. տ ամոնիակային սելիտրա, որը գյուղացիական տնտեսություններին էր տրված շուկայականից 30 % ցածր գներով: Վրաստանից ևս 10 հազ. տ ազոտական պարարտանյութ ներմուծելու վերաբերյալ պայմանագիր էր կնքվել, և 1999թ. այն բերվեց Հանրապետություն[23]: Սակայն սրանք մասնակի ձեռնարկումներ էին:

Չկարգավորված շուկայական հարաբերություններին անցնելիս, խիստ բարձր գների պայմաններում գյուղացիական տնտեսությունների զգալի մասը վերածվեց ձեռքի աշխատանքի վրա հիմնված ունիվերսալ բնատնտեսության և սկսեց առաջնորդվել սեփական սպառման համար արտադրելու սկզբունքով: Գյուղացիության մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկայի օգտագործման հնարավորությունից՝ դրա բազայի փոշիացման պատճառով: Գյուղատնտեսական մեքենաների, սարքավորումների և այլ արտադրամիջոցների զգալի մասը պետք է հանձնվեր տեղական խորհուրդներին՝ գյուղացիական տնտեսություններին սպասարկելու նպատակով: Դա թուլացնում էր արտադրողների նյութական շահագրգռվածությունն ու պատասխանատվությունը՝ այդ միջոցները պահպանելու և արդյունավետ օգտագործելու հարցում: Մյուս կողմից, այդ միջոցները միշտ չէ, որ ինչպես հարկն է ծառայեցվում էին արտադրողների շահերին: Շատ հաճախ գյուղտեխնիկայի առանձին մասեր վաճառվում էին թանկ գներով,իսկ տեխնիկան վերածվում էր թափոնների: Գյուղտեխնիկայի բազայի փոշիացումը մեծ հարված հասցրեց արտադրությանը: Տեխնիկան կենտրոնացվեց առանձին մարդկանց ձեռքում, որոնք ծառայության դիմաց այնպիսի գներ էին առաջարկում, որ գյուղացին հնարավորություն չէր ունենում մշակել իր հողը: Հանրապետությունում չկար նույնիսկ պարզունակ գյուղգործիքների զանգվածային արտադրության կազմակերպում: ՀՀ-ի և Ճապոնիայի ու ՁԺՀ-ի կառավարությունների միջև կնքված համաձայնագրերով 1998թ. Ճապոնիայից Հայաստանի Հանրապետություն բերվեցին 15 միավոր հացահատիկային կոմբայն և 8,5 մլն դրամ արժողությամբ պահեստամասեր, իսկ 1999թ.՝ ՁԺՀ-ից 100 տրակտոր, որոնք կոմբայնների հետ միասին մարզերում իրացվեցին բաց աճուրդային եղանակով[24]: 1999 - 2000թթ. Ճապոնիայից Հանրապետություն ներմուծվեցին 4 տասնյակի հասնող փոքր հզորության տրակտորների, գյուղգործիքների, ինչպես նաև հացահատիկահավաք կոմբայնների ու պահեստամասերի նոր խմբաքանակներ[25]:

2000թ. ՁԺՀ-ից Հանրապետություն ներմուծվեցին փոքր հզորության 78 տրակտորների և պահեստամասերի նոր (70 տեսակի) խմբաքանակներ[26]: Ինչպես Ճապոնիայից, այնպես էլ Չինաստանից գյուղտեխնիկայի ներմուծումը իրագործվում է Հանրապետության կառավարության 2000թ. հունվարի 26-ի որոշմամբ՝ որպես մարդասիրական օգնության ծրագրի

---

[23] ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, Ե., 1999, գ. 8, հ. 4, թ. 497:
[24] Նույն տեղում, գ. 7, հ. 2, թ. 424, 425:
[25] Նույն տեղում, Ե., 2000, գ. 1, հ.2, թ. 72 - 73:
[26] Նույն տեղում, թ. 74:

իրականացում[27]: Գյուղացիական տնտեսությունների մանր չափերը պահանջում էին Հայաստանում ժամանակակից գյուղատնտեսական (լեռնային հողագործության և մանր արտադրության պահանջներին համապատասխանող) մեքենաշինության ստեղծում: Այդ տեխնիկան կարելի էր կենտրոնացնել համատեղ օգտագործելու նպատակով: Միաժամանակ, համալիր ծրագիր մշակելիս հարկավոր է հաշվի առնել 50 ձիաուժանոց տրակտորների պահանջարկը և այն, որ տարիներ շարունակ չի թարմացվում գյուղտեխնիկայի հավաքակազմը, որի 2/3-ը շահագործվում է 15 - 20 տարուց ավելի, և միայն 2,7 %-ն է, որ թողարկվել է 1994թ.-ից հետո[28]:

Չորրորդ. Հողը գյուղացուն բաժանելուց հետո պետությունը փաստորեն իր գործը համարեց ավարտված ու մի կողմ քաշվեց՝ թողնելով նրան մեն-մենակ իր հոգսերի հետ: Անցման շրջանում թերագնահատվեց պետության կարգավորիչ դերը: Նրա սուղ միջոցները և արտաքին աշխարհի նյութական ու ֆինանսական օգնությունը հիմնականում օգտագործվեցին ոչ թե գյուղատնտեսության զարգացման, այլ պարենի ներմուծման նպատակով: Մինչդեռ, սեփական արտադրությունն է ցանկացած տնտեսության զարգացման հիմքը: Ագրարային ճգնաժամի հաղթահարումը պահանջում է պետության գործուն հովանավորություն գյուղատնտեսությանը, ֆինանսական ու վարկային պետական աջակցություն: Վերջին տարիներին այս ուղղությամբ կատարվել է անբավարար աշխատանք: Հանրապետության կոմերցիոն բանկերը, ռեսուրսների բացակայության պատճառով, գյուղացիական տնտեսություններին վարկեր չեն տրամադրել, իսկ արտոնյալ վարկերի մասին խոսք անգամ լինել չի կարող: Գյուղատնտեսության բնագավառում վարկավորման գործում լուրջ աշխատանք կատարեց միայն Հայաստանի Գյուղացիական փոխօգնության բանկը: Այն 1996թ. Արարատի, Արմավիրի, Շիրակի և Վայոց Ձորի մարզերում գյուղացիներին տրամադրել էր 850 հազար ԱՄՆ դոլարի չափով վարկ[29], իսկ ՀՀ կառավարության աջակցության շնորհիվ 1997թ. նրա կողմից հատկացվող վարկերի ծավալը հասել էր 2,5 մլն դոլարի կամ ավելացել 3 անգամ[30]: 1998թ. նշված մարզերին միացան նաև Արագածոտնի և Լոռու մարզերը[31]: 1999թ. պետությունը գյուղատնտեսության զարգացման նպատակով գյուղացիությանը տրամադրել է 7 մլն դոլար վարկ, այն էլ կարճաժամկետ[32]: 2000թ. նախատեսվեց անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Հանրապետության մնացած չորս մարզերում (Սյունիք, Գեղարքունիք, Տավուշ և Կոտայք) ևս կազմակերպելու գյուղացիական փոխօգնության բանկի մասնաճյուղեր և վարկավորման ընդհանուր գումարը տարեկան հասցնել մինչև 40 մլն ԱՄՆ դոլարի[33]: Սակայն անհրաժեշտ էր երկարաժամկետ վարկեր տալ գյուղացիությանը, որով միայն հնարավոր կդառնար զարգացնել գյուղատնտեսությունը: Ահավոր չափերով աճած

---

[27] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2, 14. II.2000, էջ 50 - 51:

[28] Նույն տեղում, էջ 52:

[29] ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1996, գ. 8, հ. 3, թ. 402, 403:

[30] Նույն տեղում, 1997, գ. 2, հ. 4, թ. 26:

[31] Նույն տեղում, 1998, գ. 5, հ. 2, թ. 58:

[32] Նույն տեղում, 1999, գ. 4, հ. 3, թ. 506:

[33] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000թ. հունվար-մարտին, Ե., 2000, էջ 94, 95:

գների ու սպասարկման սակագների պայմաններում, առանց պետության բազմակողմանի օգնության ու աջակցության, գյուղացիական տնտեսությունների մեծ մասը ապրանքային արտադրություն կազմակերպել չէր կարող: Այդ է վկայում գյուղատնտեսության զարգացման գործում լուրջ հաջողությունների հասած բազմաթիվ երկրների փորձը[34]:

Որքան էլ սահմանափակ լինեին Հանրապետության հնարավորությունները, դրանց զգալի մասը պետությունը պետք է հատկացներ նոր ջրամբարների ու ջրատարների կառուցման և հների վերանորոգման նպատակին: Միայն այդ ճանապարհով կարող էր արագացվել գյուղատնտեսության զարգացումն ու արդյունավետության բարձրացումը: 2000թ. հունվարի 26-ին «ՀՀ կառավարության 1999 - 2000թթ. ֆինանսական վիճակի բարելավման միջոցառումների կատարումն ապահովելու մասին» որոշմամբ «Ոռոգում» պետական փակ բաժնետիրական ընկերության ոռոգման համակարգերի շահագործման մասնաճյուղերը բաժանվեցին խմբերի[35]: Ոռոգման համակարգերի անխափան աշխատանքի ապահովման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ոռոգման ցանցերի նախապատրաստման համար դեռևս 1998թ. հատկացվեց 220 մլն դրամ[36]: Այդ նույն ժամանակ ՀՀ կառավարության հավանությանն էր արժանացել ՀՀ ոռոգման համակարգերի բարեփոխումների ծրագիրը[37], որի նպատակն էր բարձրացնել Հանրապետության ոռոգման համակարգի գործունեության արդյունավետությունը, բարեփոխումների հիման վրա վերափոխել համակարգի կառավարման կառուցվածքը, նոր մեխանիզմների օգտագործմամբ հստակեցնել ջրամատակարար և ջրօգտագործող սուբյեկտների միջև փոխհարաբերությունները, բարելավել ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը:

Համաշխարհային բանկի վարկի հաշվին (57,1 մլն ԱՄՆ դոլար արժեքով), «Ոռոգման համակարգերի վերականգնման ծրագրի» իրականացման շնորհիվ հնարավոր եղավ 150 հազ. հա հողատարածքի վրա ապահովել ոռոգման համակարգերի վերականգնումը և անվթար շահագործումը[38]: Դրա շնորհիվ հնարավոր դարձավ նաև 1995թ. շահագործման հանձնել Երևանի ջրանցքը, իսկ 1999թ. վերականգնել ու շահագործման հանձնել Արզնի-Շամիրամ մայր ջրանցքը, Հրազդանի ոռոգման համակարգի Սև ջուր ձախափնյա ջրանցքը, Կոտայքի, Արտաշատի, Հրազդանի մայր ջրանցքները, Արմավիրի ջրանցքը, Նալբանդի II կարգի ջրանցքը, ինչպես նաև մի շարք բնակավայրերի 213020 գծամետր ներտնտեսային ոռոգման ցանցերը: Վերանորոգվել ու շահագործման են հանձնվել 38,1 հազար գծամետր երկարությամբ ոռոգման խողովակաշարեր[39]: ՀՀ ոռոգման համակարգի վերականգնման վարկային նոր ծրագիրը, որի արժեքը 51,8 մլն դոլար է, ավարտվել է 2001թ. ամռանը: Վերականգնվել են 252,5 կմ մայր ու երկրորդ կարգի ջրանցքներ, 4 ջրամբար, 23,8 խորքային հոր, 4

---

[34] Տե՛ս И.С.Казакевич, Аграрный вопрос в Южной Корее, М., 1964, Аграрная политика в развивающихся странах Азии и Африки, М., 1975.

[35] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, № 2 (100),14. II, 2000, էջ 57 - 59:

[36] ՀՀ կառավարության ընթացիկ արխիվ, 1998, գ. 10, հ. 3, թ. 648 - 650:

[37] Տե՛ս նույն տեղում, թ. 673 - 674:

[38] Նույն տեղում, թ. 724:

[39] Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999թ. հունվար-դեկտեմբերին, էջ 38:

պոմպակայան և 8 հիմնական ոռոգման համակարգերում բոլոր վթարային հատվածները, և ապահովվել է 101 հազար հա հողատարածքի ոռոգումը[10]: Սակայն, կատարված աշխատանքները դեռևս բավարար չեն: Գյուղատնտեսության հետագա զարգացման կարևոր խնդիրներից է նաև Արարատյան դաշտի աղակալած հողերի աղազերծման և Բաղրամյանի ու Թալինի հարավային գոտու գյուղատնտեսության համար պիտանի նոր հողերի յուրացման աշխատանքների արագացումը: Վերջինս կարևոր է ոչ միայն պարենի գերխնդրի լուծման, այլև բնագաղթածների բնակեցման, նրանց խիստ ծանր վիճակը թեթևացնելու համար: Այդ չափազանց կարևոր սոցիալ-տնտեսական ու քաղաքական խնդրի լուծման պարտադիր պայմաններից են Աշտարակ-Թալին-Բաղրամյան խոշոր ջրատարի շինարարության աշխատանքների վերսկսումն ու կարճ ժամանակում ավարտելը: Ոռոգման համակարգի ըստ ամենայնի զարգացումը հանրապետությունում խաղողագործության, պտղաբուծության, բանջարաբուծության և անասնաբուծության հետագա զարգացման պարտադիր պայման է: Հայկական խաղողի, ծիրանի, դեղձի, լոլիկի արտադրության ընդլայնմանն ուղղված ջրատնտեսական շինարարության արագացումն ու ջրօգտագործման կարգավորումը հանրապետության համար ապագայում կարող են վերածվել տարադրամի ստացման խոշոր աղբյուրի: Բայց դրա համար, այդ մթերքների արտադրությունն ընդլայնելուն զուգահեռ, անհրաժեշտ է կատարելագործել գյուղատնտեսական մթերքների պետական մթերումների ու դրանց դիմաց հանդիպակաց առևտուր կազմակերպելու համակարգերը: Առանձնահատուկ ուշադրություն են պահանջում ագրարային վերակառուցումների գործընթացում լրջորեն տուժած այգեգործությունն ու գինեգործությունը: Նոր հողերի յուրացման, ջրատնտեսական շինարարության և ջրօգտագործման հարաբերությունների կարգավորման, այգեգործական զանազան կոոպերատիվների ստեղծման, ինչպես նաև պետության կողմից բազմակողմանի օգնության ու կարգուկանոնի հաստատման ճանապարհով հնարավոր կդառնա ոչ միայն այգեստարածությունների կրճատման կանխումը, այլև դրանց ընդարձակումն ու խաղողի և պտղի արտադրության ու մթերումների, ուրեմն նաև գինիների ու կոնյակի արտադրության ընդլայնումը: Փաստորեն, մինչև այժմ էլ բացակայում է գյուղատնտեսությանը վարկեր տրամադրող բանկերի ցանցը, ստեղծված չէ ագրարային արտադրանքի մթերման պայմանագրային համակարգ, վերամշակող ձեռնարկությունների սեփականաշնորհման ընթացքը դեռևս անբավարար է: Այսօր ճեղքվածք է առաջացել շրջանառու միջոցների և վերջնական արդյունքի գների միջև:

Այս հիմնախնդիրների, ինչպես նաև տնտեսավարման նոր պայմաններում գյուղացիության ակտիվության ու աջակցության միջոցով և պարենային պրոբլեմի այլ հարցեր լուծելու նպատակով դեռևս 1996թ. ապրիլին ստեղծվեց ագրոգյուղացիական միությունը: Չնայած նրա ձեռնարկած միջոցառումներին՝ գյուղատնտեսության զարգացման մեջ մեծ չափերի առաջխաղացում տեղի չունեցավ: Ըստ էության, հողերի սեփականաշնորհման ընձեռած հնարավորություններն ամբողջովին չօգտագործվեցին՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման բնագավառում սեփականաշնորհման ուշացմամբ և սպասարկող

[10] Տե՛ս Ժամանակ, 24. I. 2001:

ենթակառուցվածքների դանդաղ ձևավորմամբ: Այս գործում գյուղատնտեսական արտադրանքի իրացումը շատ վատ է կազմակերպվում. պետության օժանդակությունը դեռևս թույլ է և պետք է ուժեղացվի: Ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներից մեկն էլ գյուղացիական տնտեսությունների մենաշնորհը սեփականության ու տնտեսավարման տարբեր ձևերով փոխարինելն է: Կոլեկտիվ և պետական տնտեսությունների մենաշնորհը (65 - 70%), փոխարինվել է ավելի խիստ արտահայտված գյուղացիական տնտեսությունների մենաշնորհով (92,5%)[41]: Հանրապետությունում տնտեսավարման և սեփականության տարբեր ձևերի մրցակցության դաշտ փաստորեն չստեղծվեց: Մրցակցությունը պահպանվում էր միայն գյուղացիական տնտեսությունների միջև:

Հինգերորդ. Հողի սեփականաշնորհումը կենսագործվեց համատարած, այլ ոչ թե մաս առ մաս: Շրջափակման ու պատերազմի պայմաններում ժամանակավորապես կարելի էր պահպանել այն կոլեկտիվ տնտեսությունները, որոնք շահութաբեր էին ու դեռևս կարող էին ապահովել բարձր արտադրողականություն:

Հանրապետության տնտեսական կյանքում իրականացվող կառուցվածքային ինտենսիվ փոփոխությունների հետևանքով լրջորեն փոխվեցին նաև գյուղատնտեսությանը ներկայացվող պահանջները: Սակայն գյուղատնտեսությունը միշտ չէ, որ կարող է արագ վերակառուցվել և հարմարվել շուկայի պահանջներին: Գյուղատնտեսության զարգացմանն ուղղված ներդրումներն ու դրանց դիմաց մթերքների ստացումը ժամանակով կտրված են միմյանցից: Ծախսերը կատարվում են ամբողջ տարում, մինչդեռ մթերքների մեծ մասը տարեկան ստացվում է մեկ անգամ, իսկ առանձին տեսակների արդյունքը երևում է ներդրումներից 3 - 8 տարի հետո միայն: Աշխատանքի տեխնիկական զինվածության շատ ցածր մակարդակ ունեցող հայ գյուղացու աշխատանքի արտադրողականությունն ու եկամուտները մեծ տատանումներ ունեն, որոնք պայմանավորված են նաև բնակլիմայական ամենամյա փոփոխություններով: Այսօր գյուղատնտեսական արտադրանքի իրական աճը կազմել է ընդամենը 12 %: Հողի սեփականաշնորհումից հետո առաջին հայացքից թվում էր, թե գյուղմթերքների արտադրությունը կավելանա կամ գոնե կմնա նույն մակարդակին: Բայց ստացվեց հակառակը: Այսպես, եթե համեմատենք վիճակագրական տվյալները, ապա կտեսնենք, որ հանրապետությունում 1987թ. արտադրվել էր 285 հազար տոննա հացահատիկ, իսկ 1999թ.՝ 258 հազար տոննա[42].

2000թ. գյուղացիական, գյուղացիական կոլեկտիվ և բնակչության օժանդակ տնտեսություններում ցանվել է հացահատիկային մշակաբույսերի 81 %-ը, պարենային-բոստանային մշակաբույսերի 73,6 %-ը, տեխնիկական մշակաբույսերի 75 %-ը և կերային մշակաբույսերի 85,1 %-ը[43]:

Վեցերորդ. Առավելապես փախստականներով բնակեցված բնակավայրերում փախստականները տարբեր ձևերով օտարվեցին մասնավորապես գյուղտեխնիկայի և անասունների սեփականաշնորհման գործընթացից:

---

[41] Տե՛ս Էկոնոմիկա, № 3, 1996, էջ 33:

[42] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-դեկտեմբերին, Ե., 2000, էջ 26:

[43] Տե՛ս ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարության ընթացիկ արխիվ, Ե., 2000, գ. 20-15-99, թ. 7:

Սեփականաշնորհման ժամանակ փախստականներով բնակեցված կամ դեռևս բնակեցվող գյուղերի ղեկավարումը, որպես կանոն, գտնվում էր. հարևան գյուղերի տեղաբնիկների ձեռքին. ովքեր և իրականացրեցին սեփականաշնորհումը: Ինչպես Հայաստանի շատ գյուղերում առհասարակ. այնպես էլ այսպիսի գյուղերում սեփականաշնորհումն ուղեկցվում էր ստահոդ լուրերով, որոնք խիստ տագնապ էին առաջացնում մարդկանց շրջանում: Ի թիվս այլոց, նշվում էր, որ անասունների գլխահարկը բարձր է և պիտի ուղեկցվի մթերային հարկով (կաթ, յուղ և այլն), որ հարկերն ուշացնողները կտուգանվեն և այլն: Առանց այդ էլ կեր, գոմ և այլ պայմաններ չունեցող մարդիկ զանգվածաբար հրաժարվում էին իրենց հասանելիք անասունների գլխաքանակից: Անասունների մի մասը մնաց գյուղերի ղեկավարներին՝ տնտեսությունների տնօրեններին, գյուղխորհրդի նախագահներին և այլոց: Քանի որ փախստականներով բնակեցված գյուղերում այդ պաշտոններն էլ տեղացիներն էին զբաղեցնում, անասունները մնացին նրանց ձեռքին: Օրինակ, ներկայիս Ծափաթաղ (նախկին Ղզըլքենդ) գյուղի բնակիչների վկայությամբ, «Ոչխարը ի վերջո վերցրեց վարդենիսցի սովխոզի նախագահը, կովերի կեսը՝ մի գործարան, մյուս կեսը՝ մի կոոպերատիվ»[44]:

Նույնը կատարվեց գյուղտեխնիկայի սեփականաշնորհման ժամանակ: Հայաստանից ադրբեջանցիների հեռանալուց հետո նրանց բնակավայրերի գյուղտեխնիկան (տրակտորներ, կոմբայններ, շարքացաններ, բեռնատար ավտոմեքենաներ և այլն) սկսեցին աշխատեցնել հարևան հայաբնակ գյուղերի մեքենավարները: Քանի որ ըստ սեփականաշնորհման սկզբունքի, առաջնահերթ սեփականացնելու իրավունք ունեին տեխնիկան աշխատեցնողները հենց նրանք էլ դարձան գյուղտեխնիկայի սեփականատերերը: Դրա պատճառներից մեկն էլ այն էր, որ փախստականները վճարունակ չէին, իսկ նրանք, ովքեր միջոցներ ունեին, շտապում էին օր առաջ քաղաք տեղափոխվել, անգամ արտերկիր: Արդյունքը եղավ այն, որ փախստականներով բնակեցված գյուղերի մեծ մասը զրկվեց գյուղտեխնիկայից: Այսպես, օրինակ, Եղեգնաձորի տարածաշրջանի Նատին գյուղի բնակիչների ձեռքին կուտակվել էր շրջակա նախկին ադրբեջանաբնակ մի շարք գյուղերի տեխնիկան: Բոլոր դեպքերում փախստականները եկել էին այն համոզման, որ տեխնիկայի սեփականաշնորհման ընթացքում իրենք շրջանցված են այն պարզ պատճառով, որ «տեղացին տեղացուն է պահում»[45]:

Ըստ փախստականների՝ հարաբերականորեն արդար է կատարվել հողերի սեփականաշնորհումը: Գյուղերում հաստատված փախստականների զգալի մասն այս կամ այն չափով մշակում է հողը: Սակայն այստեղ ևս խնդիրները շատ են: Հայաստանում մնացած փախստականների զգալի մասը միայնակներ են, տարեցներ կամ առանց տղամարդու ընտանիքներ: Այսօրվա գյուղատնտեսական աշխատանքները պահանջում են ինչպես սկզբնական կապիտալ, այնպես էլ տղամարդու աշխատուժ: Այսպես, Վարդենիսում մեկ հեկտար հացահատիկի ցանքից մինչև բերքահավաքը կատարվող ծախսը կազմում է նվազագույնը 50 հազար դրամ, որի մեջ մտնում է տրակտորիստին, շարքացանին, կոմբայնավարին, բերքը տեղափոխող մեքենային տրվող վարձավճարը, սերմացուի արժեքը, դիզելային վառելիքը,

[44] Աղքատությունը և ժողովրդավարությունը Հայաստանում, էջ 13:
[45] Նույն տեղում, էջ 14:

ոռոգման ջրի արժեքը (իսկ պարարտացման դեպքում՝ ավելի թանկ)[46]: Փախստականների մեծ մասն այդ գումարը չունի աշխատանքներն իրականացնելու համար: Անշուշտ, նույն խնդիրներն ունեն նաև տեղաբնիկները: Սակայն առանձին հարցերում նրանք ավելի պաշտպանված են: Աղգակցական համակարգով պայմանավորված՝ կամ ազգական տրակտորիստն է անվճար կատարում այս կամ այն աշխատանքը, կամ էլ կարիքավորի համար վճարում են աղգականները և այլն: Այս իրավիճակը փախստականին անհավասար իրավիճակի մեջ է դնում տեղացու հետ: Հող մշակելու դժվարությունները, անջրդի և չպարարտացվող հողից սպասվող խիստ սակավ արդյունքը և հարկերի վճարման անհրաժեշտությունը փախստականներին ստիպում են հողից հրաժարվել: Այսպես, տարբեր պատճառներով Վարդենիսի Ծափաթաղ գյուղում հողից հրաժարվել են 50, Մեծ Մասրիկում՝ 20, Սողքում՝ 120 ընտանիք (առկա 420-ից) և այլն[47]: Որոշ ընտանիքներ հողից հրաժարվում են ընտանեկան նպաստ ստանալու ակնկալիքով: Ավելի լավ է տարեկան 60 - 80 հազար դրամ ընտանեկան նպաստ ստանալ, քան 1 հեկտար հողից՝ լավագույն դեպքում 10 - 12 ցենտներ հացահատիկ, որի դրամային արժեքը, ծախսերը հանելուց հետո, նույնն է դալիս կամ պակաս է[48]: Սրան զուգահեռ, լայնորեն տարածված է հողը վարձակալությամբ տալը: Այդպես են վարվում հողը մշակելու նյութական և ֆիզիկական կարողություն չունեցող փախստականները և տալիս են գլխավորապես հենց գյուղապետերին կամ տեխնիկա ունեցողներին[49]:

Փաստորեն, գյուղերում սեփականաշնորհման հետևանքով առաջացան մեկնարկային տարբեր հնարավորություններով ընտանիքներ, որոնց սոցիալական շերտավորումները խորանում են մինչ վերափոխումներն ունեցած բազային հնարավորությունների տարբերություններով՝ աշխատող տղամարդ ունեցող-չունեցող, մանկահասակ, բազմազավակ և գլխավորապես աշխատանքային տարիքի կազմով ընտանիքներ, միայնակ կամ միայն թոշակային տարիքի կազմով ընտանիքներ, պաշտոնյաների հետ կապեր ունեցողներ և այդպիսիք չունեցողներ և այլն: Հողի բաշխման հետ միասին սոցիալական և վարկային ոչ ճիշտ քաղաքականություն իրականացրած երկրում ամենածանր կացության մեջ հայտնվեցին աշխատուժ չունեցող ընտանիքներն ու փախստականները:

Նշված սխալներն ու թերությունները վերացնելու համար անհրաժեշտ է մշակել գյուղատնտեսության զարգացման համալիր ծրագիր՝ փախստականներին տալով որոշ արտոնություններ:

Կամավորության սկզբունքով գյուղացիական տնտեսությունների, սպասարկող, մթերող, վերամշակող, փոխադրող, իրացնող և այլ կազմակերպությունների ստեղծումը գյուղում հարկային ծանր բեռի թեթևացումը, ավելորդ, ոչ անհրաժեշտ ծախսերի ու կորուստների կրճատումը պարենային համալիրի գործունեության արդյունավետության բարձրացման ուղիներից են: Բոլոր դեպքերում, գյուղատնտեսության զարգացման նկատմամբ պետք է համալիր մոտեցում լինի, կարգավորումը՝ տնտեսական լծակներով, իսկ

---

[46] Տե՛ս նույն տեղում, էջ 15:
[47] Տե՛ս նույն տեղում:
[48] Տե՛ս նույն տեղում:
[49] Տե՛ս նույն տեղում:

հովանավորումը՝ պետության կողմից: Այս խնդիրների լուծումը անհրաժեշտ պայմաններ կստեղծի հանրապետության գյուղատնտեսության ճգնաժամային իրավիճակը հաղթահարելու, զարգացման ուղի դուրս բերելու համար:

О НЕКОТОРЫХ РЕЗУЛЬТАТАХ АГРАРНОЙ РЕФОРМЫ ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Э.Г.МИНАСЯН

Резюме

Аграрная реформа в Армении была проведена в сжатые сроки, в результате чего были нарушены производственная и социальная инфраструктура села, технологии производства, сокращены посевные площади и поголовье скота. Несмотря на то, что число занятых в сельском хозяйстве почти удвоилось, снизились эффективность производства и объем валовой продукции.

Анализ развития сельского хозяйства в РА выявляет, что основной стратегией проведения экономических реформ при переходе к рыночной экономике является приватизация и разгосударствление государственной и кооперативной собственности. Предпосылки для проведения подобной стратегии были созданы только в 1991 году. В статье указаны принципы дифференцирования основных подходов к приватизации сельского хозяйства, анализируются также результаты проведенной приватизации и разгосударствления и дается возможный прогноз дальнейшего развития.

Анализ кардинальных изменений, имеющих место в сельском хозяйстве республики, дает возможность оценки перспектив проводимой экономической политики.